

ւարեցոյց զմեզ. շինեցի զկամուրջս, կանգնեցի զխաչս լիշատակ նմա և ի մխիթարութիւն ինձ և ի կեանս ծնողաց և եղբարց մերոց. յիշեցէք ի Քս. Յս. 21:

Խաչի ճակատը, որ այժմ կոտրուած և վայր է ընկած, կրում է հետևեալ արձանագրութիւնը.

«Սուրբ տէրունականն»:

VIII.

ՎԱՆՔԻ ՍՐԱՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վանքի սրբութիւնները կամ սրբոց մասունքները պահուում են սբ. Նշան եկեղեցու խորաններից մէկում՝ տուանձին արկղի մէջ. այս պատկառելի աւանդներն եկեղեցու գլխաւոր հարստութիւնն են կազմում և վանքն աւելի նուիրական դարձնում ժողովրդի աչքում: Մասունքներից մեծ մասը նուիրուած են զանազան անձերից վերջին դարերում. յայտնի է, որ հնումը սովորութիւն կար, որ նշանաւոր ընտանիքները կամ իշխանական տոհմերը մեծ գնով ձեռք էին բերում մի որևէ սրբազան մասունք և պահում կամ թէ վերջը նուիրում իրենց մայրենի եկեղեցուն. այսպէս օրինակ Բագրատունեաց արքայական տունն ունէր սբ. Նշանի մասունքը, որ յետոյ Աշոտ Ոգորմածի ամուսին Խոսրովանոյշը նուիրեց Հաղբատայ վանքին: Վանքի նշանաւոր մասունքները հետևեալներն են.

1) Սբ. Գրիգոր Լուսաւորչի աջը, որ շինուած է արծաթից և ոսկեջրած. բութ և մատնեմատը իրար հետ ծալած են ձեռքի դաստակի վրայ և այդպիսով սբ. աջը խաղաղութիւն ասելու միջոցին բռնած գիրքն ունի: Մատնեմատին հազցրած է մի կանաչ ակնով զարդարուած գեղեցիկ մատանի. բազուկի երկու ծայրերը շրջապատուած են ակնազարդ ապարանջաններով: Սբ. աջի վրայի գրուածքից երևում է, որ շինուել է ՌՃԼԳ հայոց թուին (1134 —

1685) Եղիազար կաթուղիկոսի և վրաց Գորգի խանի թագաւորութեան ժամանակ:

2) Սբ. Յովհանն Օձնեցի իմաստասէր կաթուղիկոսի աջը, նսնայէս արծաթեայ և ոսկեջրած, նոյն ձևով. շինուած է նոյն թուականին, գորգարուած է ակներով և մի մատանի է կրում. շինուած է զի թագաւորութեան Մահ Սուլէյմանին, և հայրապետութեան Տեառն Եղիազարու և խանութեան Լօռու Թահմազ Ղուլիխան և Աղաշահմուրադրէգին սուրբ Սհանաթէմ Աբազին և Մահգաբուն շինեցաւ ձեռամբ ուստայ Յովսէփին և Սարգսինս.:

3) Թովմա առաքեալի ականջը, որ ապառաժ կուուած ոսկին է. փաթաթուած է բամբակի մէջ և դրուած մի աւետարանաձև, ակնազարդ արծաթեայ պահարանի մէջ, որ դրսից ծածկուում է ոսկեջրած փոքրիկ երկփեղկեան դռնով: Դռնակի ճակատին նկարուած է Թովմա առաքեալը՝ ձեռքին բռնած մի թուղթ, որի վրայ արաբերէն տառերով գրութիւն կայ:

4) Թովմա առաքեալի մասունքը, որ դրուած է արծաթեայ ոսկեջրած սիրուն խաչի մէջ. խակ խաչը դրուած է մի աւետարանաձև արծաթեայ և ոսկեջրած ծանր պահարանի մէջ, որ իր մեծութեամբ ու գեղեցկութեամբ գերազանցում է բոլոր մասունքների պահարաններին: Այս արծաթեայ շքեղ պահարանի մէջ, ապակեայ ծածկի տակ դրուած են զանազան քարեր և ապակիներից մէկի վրայ դրուած է. «Նամբարձման տեղի քարիցն է, որ համբարձաւ Տէրն մերս. երկրորդ ապակու վրայ դրուած է. սրբազան սբ. Գերեզմանի վիմիցն է, որ մշտապէս բերէ զլոյս իւր առ հաւատացեալս»: Պահարանի վրայ նկարուած են Պօղոս-Պետրոս առաքեալները, խակ գրանցից վերև հրեշտակներ ու ամպեր: Պահարանի յետևը գրուած լիշտակարանից երևում է, որ շինուած է 1817 թուին:

5) Ղուկաս աւետարանչի ծնոթի մասը, որ ամփոփուած է աւետարանաձև արծաթեայ պահարանի մէջ. մասունքը նկատելի է. պահարանի փականները զարգարուած են ար-

ծաթեայ և ոսկեջրած պատկերներով: Պահարանի յետևի փայտի վրայի գրուածքից երևում է, որ պահարանը շինել է տուեղ Բարսեղ եպիսկոպոսը:

6) Մասն սբ. Նշանի, որ դրուած է ականակուռ խաչի մէջ, իսկ խաչը դրուած է վերոյիշեալ աւետարանաձև պահարանի մէջ՝ Ղուկաս Աւետարանչի ծնօտի հետ:

7 Սբ. Աստուածածնայ մազը և զգեստի կտորը. դրուած են գեղեցիկ, ականակուռ խաչի մէջ. խաչն էլ դրուած է աւետարանաձև պահարանի մէջ, որ շինուած է արծաթից և ոսկեզօծ է: Պահարանի վրայ գրուած յիշատակարանից երևում է, որ այս մասունքն ու պահարանը վանքին ընծայել է Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանցը:

Բացի յիշեալ նշանաւոր մասունքներից կան նաև բազմաթիւ արծաթեայ մեծ ու փոքր խաչեր, բուրվառներ, որոնք համարեա բոլորն էլ վերջին դարերի գործ են և պատրաստուած Ռուսաստանում, ինչպէս երևում է նրանցից շատերի վրայ եղող սլաւոնական գրերից. այդպիսի կազմ ունի և այն մեծագիր աւետարանը, որի յիշատակարանից իմանում ենք, որ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի անձնական գործածութեան համար է եղել. «ի վայելումն անձին իւրոյ»—1217 թուին (1768):

IX.

ՎԱՆՔԻ ԶԵՆԱԳԻՐՆԵՐԸ

1) Աւետարան. փոքրիկ գիրքով, արծաթեայ կազմով նկարներով զարդարուած և Յիսուսի կեանքից առնուած պատկերներով. բոլորագիր մանչ տառերով գրուած է նուրբ մազաղաթի վրայ: Չեռագրի մի երեսի վրայ մանր տառերով գրուած է. «... Մոնի Աղէքսանդրացւոյ բազմաշխատութեամբ եթող մեզ զաւետարան Մատթէոսեան զհամարաբառս այլոց աւետարանչացն զգրուագս եղեալ առ ընթեր միմեանց որպէս զի հարկէ գիպեալ շարից կարգեցից ևս ապականէր»: